

- 3 *ին քօարն*
- 4 *թվ. Ռ*
- 5 *Ի Ը:*

Մանրություն. — 1. Պետք է կարգալ՝ Սուրբ Նշան տէրունական պարոն Վասակին (Իեր) քաւարան, քվ. ՌԻԸ:

2. Երբորդ տողում շփոթութեան հետեանքով աւ-ի փոխարեն օ է գրվել քաւար[ա]ն բառի մեջ:

Գ. ՄԵՏ կամ ԱՍՏՎԱԾԱԾՆԻ ԳԱՎԻԹ

44. Մեծ գավթի միջին քաղի հր մասում

Հ ՈԿԴ Մ 1215

Հրատարակված է Ջալ 20—21, Վիմ 57

1 *Ի թու. ՈԿԴ:*

2 *Ես՝ Կոստանդ, որդի Գրիգորո, թոռն [Համագ]ասպենց, եկի Սանահինս,*

3 *եւ մեծաւ յուսով ետու յԱձածինս զ[արդիւնս] վասն հոգո իմոյ իմ հայրեն-*

4 *եցն: Եւ առաջնորդք սբ ուխտիս եւ [միաբ]անքս ընկալան եւ հա(ս)տա-*

5 *տեց[ին] . . .*

6 *սւ տաւն զսբ ծա[ռզարդարին] ամէն եկեղեցիքս ինձ պատար[ազել զ] Քս*

7 *[մ]ինչ ի կատարած աշ[խարհի: Որ] զիմ յոյսս խափանէ, Յուգա եւ ս[ա]տանա եղից[ի] . . . : Առա-*

8 *ջնորդք սբ ուխտիս հ[այր Փիլիպոս եւ վար]դապետ Գրիգոր եւ զլուխ տանն տերունի վարդա[պետաւքս եւ միաբ]անաւքս [հա]-*

9 *ստատեցաք զինդիր[ն Կոստանդի]: Ով խափանէ նզոված է:*

Մանրություն. — 1. Կետեր գրված տեղերում քարերն ընկած են:

2. Երկրորդ տողում Համագասպենց բառը վերականգնել ենք Ջալ-ի համաձայն: Նրա ընդօրինակման ժամանակ այդ քարը, ինչպես երևում է, դեռ տեղումն էր:

3. արդիւնս բառը, երբորդ տողում վերականգնել ենք դարձյալ նույն եղանակով:

4. Չորրորդ տողում միաբանքս բառը վերականգնել ենք մտքի զորութեամբ:

5. 4-րդ տողի վերջին հա(ս)տատեց[ին] բառը թեև աներկրա է, բայց 5-րդ տողի սկզբի ս եւ լ կամ ա եւ ռ գրերը ինչ որ այլ բառի վերջավորութեան մասերն են, որ դժվարանում ենք վերականգնել:

6. 5-րդ տողում ծառզարդարին պատարագել և 6-րդ տողում՝ աշխարհի բառերը վերականգնել ենք մտքի զորութեամբ:

7. 6-րդ տողում Յուգա և սատանա եղիցի բառերից հետո կարող են այլ բառեր ևս լինել, օր. առաջնորդ նորա, բայց տեղի նեղվածութունը բացառում է այդ հանգամանքը:

8. Հայր Փիլիպոս և վարդապետ բառերը 7-րդ տողում վերականգնել ենք այլ արձանագրությունների հիման վրա: № 45 արձանագրությունից երևում է, որ այդ ժամանակ վանքի վանահայրը Փիլիպոսն էր, իսկ վարդապետը՝ Գրիգորը, ըստ որում Փիլիպոսի անունը գրվում էր մի Պ գրով Փիլիպոս և ոչ թե Փիլիպոս. Այդ ձևով էլ վերականգնել ենք նրա անունը: